Հունիսի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 20 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի պետական բժշկական համալսարանի «Մուրացան» հիվանդանոցային համալիրի տանիքի վերակառուցման նախագծում», «Երևան քաղաքի Հովհաննես Շիրազի անվան թիվ 169 հիմնական դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի կահավորում» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց համայնքի Սրանոց ջրանցքի վերանորոգում» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2013 թվականի» և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվա-կանին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2013 թվականի» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքի տպագրություն» և «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տանիքի վերանորոգում» ծրագրի ծրագիրը.

«Վերջին Օրերի Սրբերի բարեգործություններ» կորպորացայի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամա-տակարարում» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմա-կերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը.

«Արմենակ և Աննա Թադեոսյանների անվան բժշկական կենտրոն» հիմնադրամի շահագործման և պահպանման» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Նոր Արթիկ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում», «Արագածոտնի Ապարանի տարածաշրջանի չորս համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում», «Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության տարածքում մանկական գրադարանի հիմնում», «Ամառային ճամբար Շիրակի մարզի Գյումրի քաղաքի, Մարմաշեն և Հովունի գյուղերի 600 երեխաների համար» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկևան համայնքի խմելու ջրի ջրամբարի և Այգեհովիտ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում» ծրագրերը.

«Քաղցկեղով երեխաների բարեկամներ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն մանկական քաղցկեղի դեմ պայքարին» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: